ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի
Մ Ա Ր Զ Պ Ե Տ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. (374+1) 287401, (374+81) 2 25 22**

,, _____,, ,,_____,, 2018թ N _____ **Ֆաքս (374+1) 28 18 32**

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ
ԼՐԱԳՐՈՂ ԳՐԻՇԱ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բալասանյան

Ի պատասխան 09.01.2018թ. գրության Վայոց ձորի մարզում խմելու ջրի ջրամատակարարման և ջրի որակի վերաբերյալ՝ Ձեզ ենք տրամադրում տեղեկատվություն համաձայն գրությամբ նշված կետերի:

1. 2016-2017թթ կենտրոնացված ջրամատակարարման համակարգից օգտվում են Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ քաղաքները: Եղեգիս համայնքի Շատին բնակավայրը, Եղեգիս բնակավայրը մասնակի: Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրը: Մալիշկա համայնքը, որոնց սպասարկումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ –ի կողմից :
2. Կենտրոնացված համակարգից չօգտվող համայնքները ունեն իրենց լոկալ ջրաղբյուրները և համայնքի ջրամատակարարման ծառայությունների մատուցումն իրականացվում է համայնքապետարանների միջոցներով և ուժերով (մասնավոր դեպքերում համայնքապետարանների կողմից ստեղծված ՀՕԱԿ-ների միջոցներով):
3. Մարզի 44 համայնքներում իրականացվում է ջրի վարակազերծում:
4. 2016թ. ընթացքում մարզի 44 համայնքների ջրամատակարարման համակարգերից մանրէաբանական ցուցանիշներով հետազոտվել է ջրի 7098 նմուշ:

Շեղումներ արձանագրվել են Գլաձոր, Վերնաշեն, Արփի, Ռինդ, Արենի, Աղավնաձոր համայնքներում:

2017թ. ընթացքում մարզի 8 համայնքների 44 բնակավայրերի ջրամատակարարման համակարգերից հետազոտվել է ջրի 2754 նմուշ:

Շեղումներ արձանագրվել են Արենի համայնքի Արենի բնակավայրում: Ջերմուկ համայնքի Հեր-հեր և Գնդեվազ բնակավայրերում: Վայք համայնքի Արին բնակավայրում:

5. 2016թ-ին մանրէաբանական ցուցանիշով շեղումներ արձանագրվել են Գլաձոր (13.5 %), Վերնաշեն (16.4 %), Արփի (12.2 %), Ռինդ (9.8 %), Արենի (14.2 %), Աղավնաձոր (7.8 %) համայնքներում: Նշված համայնքներում կրկնակի վերցված փորձանմուշներում շեղումներ չեն արձանագրվել: 2017թ-ին մանրէաբանական ցուցանիշով շեղումներ արձանագրվել են Արենի համայնքի Արենի բնակավայրում (5.7 %), Վայք համայնքի Արին բնակավայրում (40 %), Ջերմուկ համայնքի Հեր-հեր (35.8 %) և Գնդեվազ (35.2 %) բնակավայրերում: Կրկնակի վերցված փորձանմուշներում շեղումներ չեն արձանագրվել:
6. 2016-2017թթ ընթացքում ջրային գործոնով պայմանավորված բռնկումներ չեն արձանագրվել:
7. Մարզի առաջնահերթ խնդիրներից է Եղեգնաձոր և Վայք համայնքներում մաքրման կայանների կառուցումը, որը կնպաստի շրջակա միջավայրի և էկոհամակարգի բարելավմանը:

Հարգանքով՝ **Հ.ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատարող՝ Ռ. Մինասյան
Հեռ. 0281 2 55 04